ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական բաժնի կողմից 2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրավաբանական բաժինն իր աշխատանքներն իրականացրել է լրիվ ծավալով, ուշացած գրություններ և հանձնարարականներ չեն եղել: Ստացել ենք 439 մտից գրություն, ի պատասխան ելք է եղել 432-ը, բաժնի կողմից գրվել է ելից 81 գրություն: Ներքին գրությունների քանակը 3459-ն է:

❖ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Բաժնի կողմից ուսումնասիրվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը, ուսումնասիրվել է մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված 368, համայնքի ղեկավարների կողմից ընդունված 1059 որոշում և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին:

❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և ներկայացվել են խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ, տրվել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների 16 քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը հիմանկանում վերաբերվել են պետական այլ մարմինների հետ հարաբերություններում դժգոհությունների, աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում առաջացած վեճերի, հարևանային իրավունքի, սեփականության իրավունքի, գույքին պատճառված վնասի, ապահովագրության վերաբերյալ, սոցիալական և բազմաբնույթ այլ խնդիրների: Դիմումներին պատասխանվել է ՀՀ օրենսդրության պահանջներից ելնելով, մի մասին տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան, իսկ մարզպետի աշխատակազմի իրավասության շրջանակից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ դիմումատուներին բացատրվել է գործող կարգը և ուղղորդվել են համապատասխան ոլորտներ:

❖ Պատրաստվել են Բաժնի գործունեությանն առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին:

❖ Ուսումնասիրվել են մակագրված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոշ դեպքերում ներկայացվել են առաջարկություններ՝ դրանցում ներառելու համար:

❖ Ամենամսյա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

❖ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

❖ Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, փաստաբանների, լրագրողների հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ուղարկված գրություններին, հարցումներին:

❖ Մարզպետի աշխատակազմին առնչվող հարցերով կազմվել են ՀՀ դատարաններ են ներկայացվել միջնորդություններ, հայցադիմումներ, բողոքներ:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՄԱՂԱՔՅԱՆ
07.07.2023թ.